ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքապետարանում գործող 9 բաժինների (Ֆինանսատնտեսագիտական, Գնումների, Եկամուտների հաշվառման և հավաքագրման, Իրավաբանական, Կրթության,սպորտի,մշակույթի,երիտասարդության և առողջապահության, Քաղաքաշինության և հողաշինություն, Կոմունալ տնտեսության և տրանսպորտի, Առևտրի, սպասարկման և գովազդի, Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների) գերծանրաբեռնված աշխատանքի արդյունքում անգամ ունենում ենք հանձնարարականների ժամկետանց կատարումներ, աշխատանքային թերացումներ: Հանձնարարականների հսկայական ծավալով պայմանավորված՝ հարկավոր են տեխնիկական աշխատանքներ իրականցնող աշխատակիցներ, որոնք կօժանդակեն համապատասխան աշխատանքները ժամանակին , որակով և բարձր մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար, ուստի խիստ անհրաժեշտություն է առաջանում աշխատակազմի հաստիքացուցակի քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմը համալրել ևս 3 հաստիքով: